ժողովը ահով և սոսկմամբ լցուց։ Ցիրա-
ւի, կ'ըսէ Գիւվիէ, մարդ առանց սար-
սափելու չկրնար մտաբերել որ քանի
մը շաբաթուան յապաղումն որ ամե-
նևին անսովոր բան մը չէր այն ժամա-
նակին մոլեգնութեանց մէջ, հասցնել
ձգել զինքն այն ժամանակին երբ սպա-
նութիւնները դադրեցան։

Փոլզ օրիորդը, դուստր ընդհանուր
վարձաւորի մը, որուն հետ ամուսնա-
ցեր էր Լավուազիէ յամին 1771, և որ
իրեն օգներ էր իր աշխատանաց և բա-
րի գործոցը մէջ, ժողովեց և հրատա-
րակեց՝ իր հուչակաւոր ամուսնոյն մա-
հուընէ վերջն՝ այն Ցիշատակարանքն
և Հատակոտորքն որոնց վրայ Լավուա-
զիէ անդադար աշխատեր էր ինչուան
վերջին վայրկեաններն։ « Իր բանտին
խորը, կ'ըսէ Գիւվիէ, և երբոր գիտեր
թէ իր սպանման վրայ կը մտածէին,
Լավուազիէ հանդարտութեամբ և ան-
խռովութեամբ դեռ կը զբաղէր իր գը-
րուածոցը տպագրութեանն, որ ութը
հատոր պիտի գրաւէին...։ Գրատուն-
ներն ասկէ աւելի սրտաշարժ յիշատակ-
ներ չեն ունեցած։ Այն վերջին տողերն
հանճարաւոր մարդու մը, զոր կը գրէր
կախաղանին առջև, այն ծայրատեալ
հատորներն, այն ընդհատեալ խօսքը
պարբերութեան մէջ տեղէն, և որոնց
շարունակութիւնը կորսուեր է յաւի-
տեանս յաւիտենից, յիշեցընել կու տան
այն թշուառ ժամանակաց սոսկումն ու
արհաւիրքն »։

« Մի այն վայրկեան մը անոնց բաւա-
կան եղաւ, գոչեց անուանին Լակռանժ
այն գլուխը վար առնելու, և որչափ տա-
ղիներ պէտք են նման գլուխ մը վերա-
ծնանելու համար »։

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՄԵԾԱՑ

ԱՆԻ

Ե. ԵԿԵՂԵՑԻ, ԱՌԱՔԵԱԼՔ. — Դարձ արարեալ վերատին յարևմուտս կոյս անդր քան զկաթողիկէն, հինգերորդ եկեղեցին ընդ առաջ լինի Առաքեալք անուանակոչեալ։ Մի 'ի հոյակապ եկեղեցեացն է և սա, ոչ մեծութեամբ այլ ամրաշէն և այլատարազ կերտուածովքն. չիք նորա գմբէթ իբրև զայլոցն, այլ կամարաւ ևեթ յարկեալ։ Զև եկեղեցւոյն քառակուսի է. և 'ի չորից կողմանց կամարադօտի ածեալ, գրեթէ տափարակ և ոչ քաջ աղեղնաձև, միանան 'ի կեդրոնի. և միջոց գօտեացդ մեծամեծ քարամբք յարկեալ։ Այդ կամար եկեղեցւոյն անխախտ կայ ցայսօր անսիւն։ Տեղի խորանին ոչ իբրև զայլոցն է կիսաբոլորակաւ և բեմիւ զատուցեալ, այլ հարթ հաւասար իբրու զայլ կողմանսն, քանդակս ևեթ ունելով պէսպէս ձևոց և խաչից, նոյնպէս և արտաքոյ նորին կողմանն. որք և այնչափ անարատք են մինչև կարծել թէ այն ինչ քանդակագործ արհեստաւորին մեկնեալ է անտի։ Սակայն այդ զարմանաչէն եկեղեցի հանդերձ բազմաքանդակ դրուագքն առաւել քան զայլս 'ի վերոյգրելոցդ խաթարեալ է, ոչ այնքան ժամանակին հնութեամբն, որպէս կարծեմ քան 'ի բրբ-

նութենէ աշխարհաւեր ձեռաց. և վկայ ասացելոցս՝ յարևելակողմն նորա արտաքոյ՝ 'ի քանդակագործ քարանցն 'ի գետնոյ և 'ի վեր 'ի բաց փրթուցեալ է որչափ ձեռն հասանէ. իսկ յայլ կողմանս նոյնօրինակ 'ի մեծամեծ քարանց բարձեալ են, և շարք ևս անկեալ և խորտակեալ, և եկեղեցին պատեալ շուրջանակի յաւերակաց անտի: Ըստ հիւսիսոյ կից ընդ եկեղեցւոյն կայ աւերակ մատրան հոյակապ յոյժ որպէս երևի 'ի մնացորդացն և 'ի մեծամեծ քարանց անկելոց մի զմիով: Հոյակապ է դարձեալ և միւս մատուռն մեծագոյն քան զնա երկայնեալ 'ի կողմն արևելից 'ի հիւսիսոյ եկեղեցւոյն: Որմունք այսր մատրան 'ի տեղիս տեղիս կանգուն կան. և տեղի խորանին և հատուած մի արձանագրի 'ի վերայ նորա, որպէս տեսցի ստորև: Թէպէտ և բազում են արձանագրութիւնք եկեղեցւոյս ներքոյ և արտաքոյ, սակայն կարևորն 'ի նոսա յորում յիշատակեալ էր արդեօք և շինողն և ժամանակ շինութեանն՝ չկայ. զի դրունք և բարաւորք նորա հանդերձ այլ ևս բազում մասամբ՝ այնքան խաթարեալ են և քանդեալ, զի կամ բարձեալ է արձանն այն և կամ ընդ աւերակացն անկեալ և խորտակեալ. իսկ մնացեալքն այսոքիկ են, յորոց 'ի միումն յիշատակ լինի զմահուանէ անապատաւորի ուրուք անծանօթ եղելոյ 'ի մարդկանէ: Եւ նախ ներքինքն.

ՆՁ. Թու. շնորհիւն ա՟յ ես աբողամր որդի վահրամա իշխանաց իշխանի ետու զկառնու տխարտն 'ի ք՟ս առաքեալքս վասն եղբաւր իմ գրիգորոյ առողջութեան եւ կենացն յերկարութեան.

ա՟ծահաճոյ եւ ընդրեալ ք՟ս միայնակեացն գանձակեցի զԾԵ ամ յանապատի կեցեալ խոտաճարակ եւ անտես 'ի մարդկաին տեսութենէ եկն 'ի քաղաքս մեր 'ի տուչութենէ ա՟յ առժամայն հրաման 'ի տեառնէ հասեալ փոխեցաւ 'ի մշտնջենաւոր կեանսն եւ թաղեցաւ պանդխտաւրէն 'ի գերեզմանս աշխարհականաց եւ դիրք ք՟ս ոսկերաց նորա բժշկութիւն առնէ ամենայն ախտաժետաց եւ ես տ՟ր գրիգոր սահմանեցի զա՟ծածնին կիւրակէն աւրն յանուն նորա պատարագել զք՟ս ով զնմա մուտքն 'ի յաթոռէս հանէ կամ յուզել իշխէ կայենի եւ յուդաի չափին նզովեալ եղիցին.

յանուն ա՟յ ես խաչատուր ետու զիմ գանձագին սարաւոյթով տունս 'ի ք՟ս առաքեալքս իմ ոգոյս եւ իմ ծնողաց եւ պարտին սպասաւորք սորա 'ի տարւոյն : Ե : աւր ժամ առնեն անխափան եւ եթէ ոք հակառ կայ գրոյս այսորիկ յաւագաց

կամ 'ի յընտանեաց կամ յաւտարաց ։ յՃ̃ը ։ նզովեալ եղիցի հոգւով եւ մարմնով անլուծանելի .

Թվ. ՁԾ . շնորհիւն ա̃յ ես աղբուղէս որդի իւանէի թոռն մեծացն զաքարիայի եկի յանի հրամանաւ շահնշահի տեսայ զքաղաքս աղքատացեալ եւ խիստ 'ի վէր մնացել զի շատ հարկ էր 'ի վերայ դրած որ իսկզբանէ չէր եղել ես ։ գ̃ ։ հարկ 'ի վեր կալա վասն յերկար կենդանութեան եւ արեւշատութեան եղբարցն իմոց շահնշահի եւ իմ եւ վասն իմ նախնեաց գերեզմանին համար թողի զեղինն հաղըն զկովին համբրէլէն զոչխրին աղլհակն եթէ ոք յիմ ազգէ եւ թէ այլ ուստեք որ զյիշատակս մեր հաստատուն պահէ աւրհնի յամենակալ բանէն ա̃յ .

կամաւքն ա̃յ եւ հրամանաւ պարոն աղբուղին ես մխիթար որդի գրիգոր խուցիմին որ անոյ տաղմաճի էի վասն պարոնաց արեւշատութեան թողի զջաղացնոյս ամենոյ զդամղէն եւ զդահեկ վասն պարոն զազին հոգոյն եթէ ոք 'ի մեծաց կամ 'ի փոքու զայս արձանս խափանէ մարդն էն նզովել եղիցի յՃ̃ը հայրապետացն մասն եւ բաժին զյուդային եւ զկայենին առցէ եւ որ հաստատուն պահէ աւրհնին յա̃յ .

✠ շնորհիւն ա̃յ ես գէշս որդի պայկանն որ պարոնացն հրամանաւն անոյ դաղմաչ . . եւ վասն պարոն աղբուղին արեւշատութե̃ն եւ եւս վասն պարոն զազախն հոգոյն թողի ըզքասանկին զդամղէն քաղաքիս եւ որ 'ի դրուց գայ որ յառաջն չէր լել եւ ներկարարն զվաճառիկն քասանիկ չառնեն . . . ով որ զայս արձանս խափանէ դատի յա̃յ մասն եւ բաժին զուդային առցէ հաստատուն պահողքն աւրհնին յա̃յ . .
այս բանի առաջնորդ մուղանէտէն եւ քոտուր եղեն .

Թվ. ՁԿԹ . ողորմութեամբն ա̃յ ես խուանդղէս զուգակից աթաբակ շահնշահի որ յայսմ ամի ել յաշխարհէ եւ տրտմութիւն մեծ եղեւ մեզ եւ աշխարհիս արեւելից ես ա-

մուսին նորա դուստր շամշադին սահիպ դիւանին եւ պա-
րոն... իւանէ աթաբակին եւ իմ որդիս իմ զաքարիայ ա-
ղաքս պատրոնին հոգոյն փրկութեան եւ եղբարց իմոց յեր-
կար կենդանութիւն 'ի մեր հայրենիք քաղաքս 'ի յանի թո-
ղաքս զկովերոյն եւ զէշանուն զհամբրելէն եւ զդռնագիրն
մեծի եւ զփոքու որ եւ զմեր աւանդս խափանել ջանայ թէ
հայ լինի կամ վրացի կամ տաճիկ հանդատի եւ դատապար-
տի յայ մասնակից եւ գեհենակից սատանի եղիցի եւ վրացին
կրուլ եւ անիծած լիցի եւ տաճիկն 'ի յա փառաւորել փե-
ղաքարացն ամաւթով եւ սեւերես լինի իսկ որք հաստատուն
պահեն զաւանդս մեր մինչեւ 'ի կատարած աշխարհի աւրհ-
նին յամենակալէն այ որք այս բանիս հակառակ կենան նզովի
որպէս զուդա եւ զկաեն այս բարիս եւ ողորմութիւնս հաս-
տատեցաւ 'ի յամիրաութեան պարոն լիպին. Թ պտուղ
գրիչ.

Թվ. ՉՂԷ. կամաւքն այ ես շապադինս որդի յովանիսի
եսու ընձա 'ի որ առաքեալքս զոր ստեփանոս իւր ժողովըր-
դոմն իւր կալերոմն զոր յառաջն շորթել են ես. ՆԾ. սպ.
տվի եւ յառաքեալքս դարձուցի այլ եսու զխաչով պահեզի
կէսն որ 'ի հովթըլթվանց գնել էի եւ մէկ կուղպակ որ 'ի
յամիր հասնա գնել էի 'ի գտակկրոցի խանապըրի դաւնն դի-
մացէ վասն յիշատակ ինձ եւ ամուսնոյ իմոյ աւաք խաթու-
նին եւ գեղեցկատեսիլ եւ բարեպաշտ որդոյ իմոյ յովանիսին
եւ պարտին սպասաւորք սորա յամենայն ամի ժԷ աւր պա-
տարագ. Է. աւր շապադինին. Է. աւր աւաք խաթունին.
Է. աւր յովանիսին կատարողքն աւրհնին յայ հակառակքն
դատին յայ.

Արտաքոյ յարևելից կուսէ.

շնորհիւն այ 'ի տէրութեան քաղաքիս եւ յառաջնորդու-
թեան տր սարգսի եւ 'ի մելքութեան փախրադինին ես մը-
խիթար եպիսկ տեղերեցի 'ի ցամանէ շարժի աւուրքս բար-

ձաք զկիրակէի վաճառն 'ի փողոցէ ով այս գրիս հակառակ կայ թէ մեծ թէ փոքր քաղաքիս մեղացն տէր է։

յուսոնն որ առ ՝ճծ և սէր նորին ես պարոն աղբուղայս որդի ամիր սպալար շահնշահի թոռն մեծին զաքարիայի եւ ես պարոն թամարս դուստր իշխանաց իշխանի պարոն բուղ-տային տեսաք զանոյ աթոռս եւ զիրեցանիս որ հարկ էր 'ի վերէնին զոր մեր նախ (յաջորդն թերի թողեալ էր)

շնորհիւն ՝այ ես նուրայդին քոթիթս իմ ընկերաւքս եկի յանի տամղիս վերայ տեսայ զանոյ իրիցանուս զի առլե-խին հրամանքն ոչ իսկսբանէ բաժ ու տամղա չէին տվել ես այլ հաստատեց իմ ընկերաւքս որ ոչ բաժ տան ու ոչ տամ-ղայ զինչ 'ի առլեխին հրամանքն էր թողաք վասն յերկար կեն-դանութեան փաթշահին ով որ այլ բաժ ուզէ կամ տամ-ղայ ՝այու ինգեթվոր լինի ու նզոված է յԾը հայրապետացն մասն զյուդային եւ զկայենին առցէ հաստատուն պահաւղքն աւրհնին ՝այ։

ԶԾՒ էլղանին։ շնորհիւն ՝այ մեք տաղմաճիքս վասն յեր-կար կենդանութեան եւ վասն պատրոնաց մերոց սահիպ դի-ւանին եւ սահմատին եւ քարիմադինին բարձաք 'ի յանոր իրի-ցանուս զբաժն զոր իսկզբանէ ազատ էր մեք վերստին այլ հաստատեցաք չունի ոք իշխանութիւն բաժ ուզէլու ոչ ինչ ազգ ով իցէ որ կապէլ որ լինի ով այլ խաւսք ասէ կամ աղ-մանանէք աժի ուզէլու։ յԾը հայրապետացն նզոված է հաս-տատուն պահողքն աւրհնին յ՝այ։ ԻԷԼԳ։

Յարևելից կուսէ մեծի մատրանն.

։։։ կ 'ի միւսում ամն որ էր թուականս ՈԿԶ կա։։ ՝այ՝ ես տէր գրիգոր որդի ապուղամրի արհիեպիսկոպ։։։ եցաք առնալ զեղեալ հարկ 'ի մեր գաւառէս շիրակա եւ։։։ աքիս եկեղեցեացս յանոյ զի սահման էր իսկզբանէ յամենայն գե-ղէ երկու գրիւ հաց յաթոռս տալ եւ 'ի քաղաքիս յամե-

նայն եկեղեցիս մորթի մին զատկին տաւն արդ ես յաղագս յերկար կենաց պատրոնացն իմոց եւ ազգականաց եւ եղբարց իմոց եւ վասն հոգւոց ննջեցելոց մերոց թողի զայս հացս ամենայն դեղի մեծի եւ փոքու եւ զատկի մորթին ամենայն եկեղեցոյ եւ չունի ոք իշխանութիւն պահանջել մինչ'ի գալուստն քն̃ ապա եթ ։ . . . կատարինչք յիշատակիս . . . ցին յմ̃յ եւ յամենայն ն̃րց . . . կենդանութեան եւ տուղ . . . աց իւրեանց .

Զ. ԵԿԵՂԵՑԻՆ, Ս. ԳՐԻԳՈՐ. — Վեցերորդ եկեղեցին յարեւմուից կայ Առաքելոց յանուն սրբոյն Գրիգորի ոչ շատ հեռի յարքունի պալատէն 'ի ծայր քարափանն որ հայի 'ի վերայ Ծաղկոցաձորոյն, 'ի բարձրահայեաց և 'ի գեղեցկատեսիլ վայրի՝ առաւել քան զայլսն յեկեղեցեաց ։ Ցայգմ վայրի զեկեղեցւոյ իրիք յիշատակ լինի առ Ասողկայ, և արժան համարիմ յառաջ բերել անթերի զբանս նորա, որ է այսպէս. « Զմեծաշէն եկեղեցին որ 'ի Քարուղաշտի անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ և կործանեալ, կամեցաւ (Գագիկ) նոյնաձև չափով և յօրինուածով յարդարել 'ի քաղաքին Անւոյ, հիմնարկեալ 'ի կուսէ Ծաղկոցաձորոյն 'ի բարձրաւանդակ տեղւոջն, տարփատենչ տեսողացն. մեծատաշ վիմարդեան կոփածոյ վիմօք մանուածոյ քանդակեալ յօրինէ, լուսանցոյց պատուհանօք, երրակի դրամբք, աքանչատես տեսմամբ գմբէթաւորեալ գունակ գերամբարձ և երկնանման գնդին »։ Զբանս Ասողկայ ընդ մերոյս տեղագրութեան համեմատեալ՝ չէ պարտ նոյն համարել. զի թէպէտ տեղին նոյն իցէ որպէս ասէ « Ի կուսէ Ծաղկոցաձորոյն 'ի բարձրաւանդակ տեղւոջն տարփատենչ տեսողացն », նոյն և անուն սրբոյն Գրիգորի, սակայն բազում այլ բանք են որ անպատկան են նմին. նախ զի մեծաշէն չէ, այլ փոքր յոյժ. և երկրորդ ոչ 'ի Գագկայ շինեալ, այլ յԱպլղարիպայ մարզպանէն, և եթէ զԱպլղարիպայն նորոգութիւն միայն և ոչ հիմնարկութիւն ասիցեմք, որպէս իմանամ յարձանագրէն, սակայն և այնպէս հօր նորա Գրիգորոյ սեպհականի շինութիւնն և ոչ Գագկայ. այս յայտ է և 'ի թուականացն, յորոց Ապլղարիպայն է ՆՁԹ, և միւսն որ հասոյթս սահմանեալ է եկեղեցւոյն ՆԽԴ. որով յայտ լինի թէ անկեալ է թուական հիմնարկութեանն 'ի Գրիգորէ, և մնացեալ Ապլղարիպայն որդւոյ նորա նորոգողի. ապա շինեալն 'ի Գագկայ սուրբ Գրիգոր՝ իսպառ կործանեալ, յետ ժամանակաց 'ի նմին տեղւոջ և 'ի նոյն անուն կառուցեալ է սա ոչ մեծանիստ և արքայավայել, այլ 'ի փոքու սահմանեալ որչափ բաւական էր ձեռն իշխանին հիմնարկողի ։ Գեղեցկութեանն մասամբ և ճարտարպետութեանն արհեստիւ ոչ ինչ թերութիւն նըշմարի 'ի նմա. այլ դրիցն վսեմութիւն մռայցուցանէ զամենայն ։ Ի հիւսիսոյ նորա կայ աւերակ մատրանց գեղեցկաշէն՝. Թերևս զոցանէ իցէ երկու սենեակ ասացեալն յարձանագրին ։ Երեք յարձանագրացն են 'ի ճակատ դրանն օրինակ զայս.

կամաւքն ա̃յ 'ի ՆԽԴ թւ ես շուշան տիկնաց տիկին զիւ-

դակէց գրիգորոյ իշխանի եւ տուր զմրուանա կուղպակս 'ի սուրբ գրիգոր իսկ որ հակառ գա յիմոց կամ յաւտարաց յժ՟ր էցն նզոված է հոգով եւ մարմնով ·

✠ կամաւքն ա՟յ ես վահրամ իշխանաց իշխան եւ տուր զիմ որդոյն զապուխամրի ոգերաժին եւ գնեցի Ը կուղպակ զլո֊րագոյնին եւ զորսաւտին 'ի ոշականց եւ տուր 'ի ս՟բ գրիգորի եւ քան եկեղեցէքս որ ունին 'ի տարին Դ քառասունք արդ էթէ ոք հակառ գա յիմոց կամ յաւտարաց նզովեալ եղիցի 'ի հաւ֊րէ եւ յորդո եւ 'ի ս՟բ հոգոյն յժ՟ր հա եւ ապուխամրի մե֊ղացն պարտական եղիցի առաջի ա՟յ ·

✠ ես սարգիս լարարաբս եւ տուր զիմ տունս 'ի ս՟բ գրիգոր որ արնեն ինձ ժամ · · · աւր իսկ որ հակառ գա եւ զիմ յի֊շատակս խափանէ յամենա · · · նին ա՟յ · · · եւ մարմնո ամէն ·

Ցարեխլից կուսէ ·

'ի ՆՁԹ Թուականիս ես ապլղարիպ հաոց մարզպան որդի գրիգորո եւ Թոռն ապուղամրի հայոց իշխանաց Թէպէտ եւ անտես էի 'ի հաւրէ իմէ յաղագս կրսերուԹեան այլ հար֊կեցա 'ի ծնողական սիրոյն և շինեցի զայս հանգստարան հաւր իմոյ գրիգորո եւ եղբաւր իմո համզէի եւ քեռ իմո սեդաի եւ շինեցի սենակ Ը զմ՟բ ստեփաննոս եւ զմ՟բ · · · պայման քա֊հանայիցդ այս է որ զամէն ուրբաԹի սը · · · ժամն իմ մաւրն շուշանա արասցեն եւ զշաբաԹն իմ հաւրն գրիգորո եւ 'ի ս՟բ քրիստափոր զամէն ուրբաԹ իմ քեռն սեդաի եւ զշա֊բաԹն իմ եղբաւրն արնէ համզէի եւ առաջաւորացն ուրբա֊Թին եւ աղջացն ուրբաԹանոյն փոխան յարձակ աւուրքն ա֊րասցեն Է աւր արդ եԹէ ոք 'ի քահանայից եկեղեցեացդ զայդ ժամդ խափանէ եւ կամ պղերգա եւ աւր անցնէ նզո֊վեալ լիցի 'ի հաւրէ եւ յորդւո եւ 'ի ս՟բ հոգւոյն եւ յժ՟ր հայրապետացն եւ բաժին նորա ընդ յուդաի մատնչին առցէ իսկ կատարիչ գրոյս աւրհնեալ լիցի ·

ի հարաւոյ կուսէ ·

✠ ք՟ս ա՟ծ յորժամ գաս փառօք հաւր 'ի նորոգել զեր֊կիր ողորմեա գրիգորո ծառաի քո ·

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ